



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՎԱԶԳԵՆ Ա-Ի ԱՆՎԱՆ Հ 168

ՀԻՄՆԱԿԱՆ ԴԴՐՈՑ

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Բաշինջաղյան 1-ին նրբ

Հեռախոս/010/35.04.01

Էլ.փոստ- sgalstyan@mail.ru

N 141

« 19 » օգոստոսի 2011թ.

ՀՀ ՍՓՅՈՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ.ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Մեծարգո՝ նախարար

Դպրոցի աշակերտական և մանկավարժական կոլեկտիվի կողմից խորին շնորհակալություն եմ հայտնում Ամստերդամի մեկօրյա հայկական դպրոցի հետ քույր դպրոց դառնալու նախաձեռնության համար:

Կաշխատենք անել ամեն ինչ, որ քույր դպրոցի հետ համագործակցության շրջանակում առաջընթաց նկատվի հայրենասիրության, մշակույթի, կրթության ասպարեզներում:

Ուզում եմ Ձեզ վստահեցնել, որ առցանց հաղորդակցության միջոցով երկու դպրոցների ուսուցիչների և աշակերտների փոխադարձ կապով հայոց լեզվի, հայոց պատմության, հայագիտական գիտելիքների ձեռքբերմամբ կապահովվի աշակերտների հայեցի դաստիարակությունը:

Նույն կապով կապահովենք տեսահամաժողովներ, կլոր սեղաններ, բանավեճեր:

Վստահ ենք, որ այս բոլոր գործառույթների արդյունքում կավելացնենք այն երիտասարդների թիվը, որոնք «Արի տուն» ծրագրի շրջանակում կայցելեն Հայաստան:

Ակնկալում ենք Ձեր աջակցությունը քույր դպրոցի հետ սերտ կապի ամրապնդման գործում:

Հարգանքներով

Դպրոցի տնօրեն

Ս.Մ. Գալստյան

